

ՔՐԻՍՏՈՍԻ ԳԻՇԵՐՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ ԶԱՏԻԱԿԱՆ

տոյ երկաթուղիներու շոգեշարժ մեքենաները կ'ուզէ վերցնել և անոնց տեղ ելեքստրաշարժ դնել այնպէս որ Նիւ-Էօրբըէն Պոսթոն 3 ժամէն նուազ կարելի ըլլայ երթալ. այժմ 6 ժամէն կ'երթայ շոգեշարժը. սաոր օրինակ ուրիշ տեղեր. Նիւ-Էօրբըէն Սէնթ Լուիզ 24 ժամ է. Շիկակո 18 ժամ. Ուաշինկթըն 6 ժամ. Հիակարաֆօլս, որ Գանատայի Սահմանագլուխ է, 15 ժամ է, կէս առ կէս պիտի իջնցնէ. նոյնպէս բոլոր Միացեալ Նահանգներու միւս գիծերը ։ Էդիսընի այս հրաշալի գիւտերը Եւրոպացիներու համար սոսկում են վաճառակաւնական տեսակետով ։

Նիւ-Էօրբը բաղաբի ամբողջ ելեքստրականութիւնը Էդիսընի կը պատկանի. իւրաքանչիւր 1 վայրկեան 2 տուար 50 սէնթ կը ստանայ ։

Անցեալ տարի Էդիսըն իր զաւակին կը հարցնէ թէ նոր տարւոյն ի՛նչ կը փափաքի ունենալ, զաւակը կը պատասխանէ հօրը. «դեռ մէկ ամիս և հինգ օր կայ. երբ որ ամիսը լրանայ փափաքս կը յայտնեմ» ։ Երբ օրերը կը սահին ու հինգ օր կը մնայ հօրը ներկայանալով կը խնդրէ որ 50 տուար փոխարինութիւն մը ընէ 6 օրուան պայմանածամով և ըստ միջազգային կանոնաց հարիւրին չորս տոկոսով ։ Հայրը կը զարմանայ տղուն այս անակնկալ խօսուածքին, և կը վճարէ 50 տուար ։

Տղան այս փոքրիկ գումարը առնելով, տպագրական պէտքերը կը հօգայ՝ կանխավճար՝ ընելով 5ական տուար, թէ՛ խմբագիր և թէ՛ գրաշար ։ Նոր տարւոյ առաւօտուն, Էդիսըն անուն Ամասթերթ մը հրապարակ կը հանէ մօտ 50 հազար օրինակ. մէկ թիւ մըն ալ հօրը ուղարկելով բաժանորդագիրը կանխիկ է՝ կը գրէ ։ Այսօր որ նոր տարի է, կ'ըսէ հայրը, նոր Էդիսըն ամասթերթին համար «Նորագիւտ» մամուլ մը պէտք է ։ Ահա թէ ի՛նչ կը խորհի Էդիսըն տպագրութեան մասին. կ'երևի թէ դեռ կատարելագործելու պէտքը կը զգայ ։

Ս. ձԻԿԷՐՁԵԱՆ

Դիւշար դեռ թմբբութեան մէջ է. սակայն, զիշերուան խոր լուութեան մէջ, ձեան ըջիին տակ, կը լսուի՝ արդէն արթնցող, գետակներու մրմուռնջը. ձորերու և անդունդներու մէջ ձայնը կը սաստկանայ և խուլ որոտման մը կը փոխուի՝ որ կ'իմացնէ ճամբորդին թէ վտանգաւոր է ճամբան ։ Անտառը դեռ լուռ է ճգմուած բուրովին սառոյցին տակ, նման առասպելական Հերակլէսի մը իր երկաթեայ սաղաւարտին տակ ։ Մտայլ երկիրնք զարդարուած է աստղերով՝ որոնք երկրի վրայ ցուրտ և տարտամ լոյս մը կը սփռեն ։ Այս խաբէական լոյսով, հոս հոն, կը տեսնուին ձեան տակ թաղուած գիւղեր՝ սև կէտերու նման ։ Սառած դաշտին և ամալի ճամբուն վրայ կը տարածուի լըքման, ամայութեան և թշուառութեան տեսարանը ։ Երկիրը իր ցուրտ և կարծր վերարկուին տակ կծկած է անձայն, անօգնական. կարծես խիստ գերութիւն մը կը ծանրանայ վրան ։

Յանկարծ դաշտին մէկ ծայրէն կը հնչէ կէսգիշերի զանգակին ղողանջը ։ Հակառակ կողմէն կը բարձրանայ ուրիշ ղողանջիւն մը, սպա երբորդ մը, չորբորդ մը . . . ։ Գիշերուան սև յատակին վրայ կը գծուին եկեղեցիներու զանգակատուններու շողշուղուն ծայրերը. ու յանկարծ ամենայն ինչ կհանք կ'առնու ։

Ճամբուն վրայ կ'երևնան գիւղերու բնակիչները ։

Ամէնէն առջ կը քալեն խեղճներ, թշուառութեամբ տանջուողները՝ սրտերնին կտորած և զլուխնին կախ ։ Տաճար կը տանին իրենց ցաւն և համակամութիւնը. այս միայն կրնան նուիրել յարուցեալ Աստուծոյն ։

Ասոնց հտակէն, ըլչ մը հեռուէն, կու

գան հարուստները և զօրաւորները տօնական զգեստներով: Ուրախ զուարթ կը խօսին մէկմէկու հետ, և տաճար կը տանին իրենց գատակական զուարճութեանց անըջանքն:

Այդ ամբոխն հորիզոնին վրայ աներեւոյթ կ'ըլլայ: Վերջին զօղանջն կը մարի օդոյ մէջ ու դարձեալ խոր լուսթիւն մը կը տիրէ ամէն կողմ:

Մեծ խորհուրդի մը կատարուելուն մօտենալը կը զգայ մարդ՝ շարժմանէ յանշարժութիւն այդ յանկարծական անցման մէջ, կարծես այդ անդորրութեան միջոց տեղի պիտի ունենայ հրաշք մը՝ որ պիտի տայ կեանք և յարութիւն: Ու, իրացնէ, հազիւ կը բացօթի արշալոյսը, հրաշքը կը կատարուի: Կը յարուցանէ նախատուած և խաչեալ Աստուածը: Յարութիւն կու տայ Աստուածոյն՝ առ որ դարերէ ի վեր վշտացեալ և վիրաւորուած սրտերը կ'ազդակեն. «Տէր, եկ'ու՛ր»:

Աստուած յարութիւն առաւ, ու տիեզերք կ'արթննայ, կը շարժի: Լայնածաւալ դաշտն անոր դիմացը կ'ելլէ ազատած իր ձիւներէն և մրրիկներէն. դաշտերէն վերջ առաջ կու գան անտառները՝ որոնք նոյնպէս կը զգան Յարուցելոյն մօտենալը: Բարձրաբերձ եղևինները երկինք կը բարձրացնեն իրենց մագեղ թևերը. դարաւոր սոճիները կը շարժեն իրենց գլուխը. հեղեղատները և գետերը կը մոնչեն. գազանները դուրս կ'ելլեն իրենց որջերէն. թռչունները կը թռչին իրենց բոյներէն: Ամէնքը կը զգան թէ խորերէն վեհ, զուարթ և զօրաւոր բան մը կ'ելլէ՝ որ լոյս և ջերմութիւն կը սփռէ. ու ամէնքը կ'ազդակեն. «Տէ՛ր դո՛ւն ես»:

Տէրն կ'օրհնէ երկիրը և Զուրբը, գազանները և թռչունները, ու կ'ըսէ ասոնց.

— «Խաղաղութիւն ձեզի: Չեզի կը բերեմ գարունը, ջերմութիւնը և լոյսը: Պիտի խորտակեմ գետերու սառոյցի շղթաները, դաշտին կանանչութիւն պիտի հագուցնեմ. անտառը երգերով և բուրումներով պիտի լեցնեմ. թռչուններուն և գազաններուն կերակուր և Զուր պիտի տամ.

բնութիւնը պիտի զուարթացնեմ: Թո՛ղ քաղցրանան ամէնուդ համար բնութեան օրէնքները, ամէն մէկ պզտի խոտին համար, ամէն մէկ հազիւ նշմարելի ճճիին համար. այդ օրէնքները թո՛ղ զծեն սահմաններն՝ որոնց մէջ հաւատարիմ պիտի մնաց ձեր ճակատագրին: Դուք պիտի չդատուիք, վասն զի աշխարհիս ստեղծմանէ ի վեր ձեզի հրամայուածը միայն կը կատարէք: Մարդն անդադար կուույ մէջ է բնութեան հետ, կը քննէ անոր գաղտնիքները և չի գիտեր ե՛րբ պիտի լինայ իր գործը. նա պէտք ունի այդ գաղտնիքներուն՝ որոնք իր երջանկութեան և փրկկութեան անհրաժեշտ պայմանն են: Իսկ բնութիւնն ինքիրեն կը բաւէ, և յայդմէ իր առաւելութիւնը: Ի՛նչ փոյթ թէ մարդն իր այլուցներուն մէջ կամաց կամաց ճամբայ ուր կը բանայ, նա միայն շատ պզտի բաներ կրնայ ձեռք բերել. բնութիւնը միշտ կը պահէ իր անմատչելի կուտութիւնը մարդուն աչքէն, և կը շախշախէ զանի իր զօրութեամբը: Իսկ դուք, դաշտեր և անտառներ, թռչուններ և գազաններ, տացցէք իմ յարութեանս ճառագայթներով և կենդանացէք»:

Տէրն բնութիւնը օրհնէն վերջ կը դառնայ մարդկային էակներուն: Իրեն դիմացը ելեր են նախ թշուառները՝ արտասուածք և աշխատութեան ու խեղճութեան բեռան տակ ծած: Եւ երբ անոնց ըսաւ Տէրն. «Խաղաղութիւն ձեզի» իրենց հեծեծանքներով լեցուցին օդը, գետին տարածուեցան և լռին աղերսանօք կը խրնդէին իրենց փրկութիւնը:

Ու աստուածային Յարուցելոյն սիրտը վրդովեցաւ դարձեալ տեսնելով անհուն տխրութիւնը՝ զոր ինքն ալ կրած էր Զիթենեաց պարտէզին մէջ՝ ուր կը սպասէր դառն բաժակին որ կը պատրաստուէր իրեն համար: Ոտքերուն դիմաց գետնամած տառապեալներու այս ամբողջ բանակը իր անուան համար կը կրէր կեանքի բեռը: Ուշի ուշով մտիկ ըրին Տիրոջ խօսքերուն և իրենց սրտին մէջ զրոշմեցին զանոնք: Գողզթայի բարձունքներէն տե-

սեր էր զամէնքը՝ հեռուն շարժման մէջ, բռնուած գերութեան թակարդներուն մէջ, ու օրհնելու էր զամէնքը: Իր գործը զլուխ հանելու միջոց, խոստացիք էր անոնց հաւատութիւն, և, անկէ ի վեր, կոյր հաւատքով մը օգնութեան կը կանչեն, կը փափաքին տեսնել զինքը և ձեռքերնին բարձրացուցած կ'աղաղակեն. «Տէ՛ր, դո՛ւն ես»:

— «Ա՛յո՛, ես եմ. մահուան շրթանները խորտակեցի ձեզի գալու համար, իմ հաւատարիմ ծառայներս, իմ սիրելի աղքատներս. ես միշտ և ամէն տեղ ձեզի հետ եմ. ուր թափեցաւ ձեր արիւնը, հոն թափեցաւ իմ արիւնս ալ: Անբիծ սրտով անձնատուր եղաք, հաւատացիք ինձի, վասն զի իմ խօսքս ճշմարտութիւն է՝ առանց որոյ տիեզերք անօրհնութեանց զօխալին անդունդ մըն է: Աիրէ՛ զԱստուած, սիրէ՛ ջու ընկերդ ջու անձիդ պէս. ահաւասիկ այս ճշմարտութիւնը իր պայծառութեամբ և պարզութեամբ հասկանալի է, ո՛չ իմաստուն աստուածաբաններէ, այլ ձեր ցաւած և միամիտ սրտերէն: Այս ճշմարտութեան կը հաւատար և կը սպասէք անոր թագաւորելուն. ամառը՝ արօրը կառավարելով արեգական ճառագայթներու տակ. ձմեռը՝ միացող օճախին հանդէպ, աղքատիկ ընթրիքի մը շուրջը նըստած, կը սորվեցնէք զայն ձեր զաւակներուն: Թէպէտ համառօտ, սակայն այս ճշմարտութիւնը կը բովանդակէ բոլոր կեանքը, և անհաստատ ազդիւր է նոր և միշտ նոր խոկումներու: Այդ ճշմարտութեամբ կ'ելլէք անկողնէն առաւօտը, և այդ ճշմարտութեամբ անկողին կը մտնէք իրիկունը. դարձեալ, այդ ճշմարտութիւնն է զոր կը տանիք իմ խորանիս վրայ ձեր արքուններուն և համակամութեան հետ՝ որոնք աւելի սիրելի են իմ սրտիս քան խուճկեռու բուրմէները:

«Գիտցէք ուրիշն որ ձեր ժամը մօտ է, թէպէտ ոչ ոք կրնայ գուշակել թէ ե՛րբ պիտի հասնի: Այդ ցանկալի ժամը պիտի զարնէ, և այն պահուն երեցած լոյսը պիտի չյաղթուի խաւարէն. այն ժամը

պիտի ազատէ զձեզ տառապանքէ, տրտմութենէ և թշուառութենէ՝ որոնք կ'ընկճեն զձեզ: Կը հաստատեմ ըսածս, և, ինչպէս երբեմն օրհնեցի զձեզ Գողգոթայի բարձունքներէն ձեր հոգիները փրկելու գործովը, նոյնպէս կ'օրհնեմ զձեզ այսօր որպէս զի մտնէք լուսոյ, երջանկութեան և ճշմարտութեան թագաւորութեան մէջ: Ձեր սրտերը թո՛ղ չհրապուրուին ամբարիշտ խօսքերէ, թո՛ղ մնան անբիծ և մաքուր ինչպէս մինչև այսօր. և իմ խօսքս թո՛ղ ըլլայ ձեզի համար յաւիտենական ճշմարտութիւնը: Խաղաղութիւն ձեզի...»:

Տէրն շարունակեց իր ճամբան և ուրիշ ամբոխի մը հանդիպեցաւ: Հոն կային հաւրուսներ, վաշխառներ, անդուծ իշխաններ, աւազակներ, մարդասպաններ, կեղծաւորներ, սուտ բարեպաշտներ և կաշտակեր գատաւորներ: Կը քալէին ամէնքը սրտերնին առի նուաստ և չընչին խորհուրդներով. գուարթ կը խօսէին Չատի տօնին և սնտի գուարճութեանց վրայ: Ասոնք ալ սակայն կ'ստեղծէին վրդոված՝ զգալով Յարուցելուն մօտենալը:

Տէրն կանց առաւ անոնց դիմացը ու ըսաւ.

— «Գուցէ այս աշխարհիս մարդիկներն էք, և այս աշխարհիս ոգին է ձեր առաջնորդը: Ձեր բոլոր գործերուն միակ շարժառիթն է յափշտակելու և տիրելու փափաքը: Ձեր ամբողջ կեանքն շարունակեալ լեցուն է, բայց դուք այնպիսի ուրախութեամբ կը կրէք չարին լուծը որ ձեր խիղճը բնաւ չի դողար ձեզի սպառնացող սպազային հանդէպ: Ինչ որ կը տեսնէք չորս կողմերնիդ՝ կը կարծէք թէ ձեզի ծառայելու համար եղած են. կը տիրէք աշխարհիս, ոչ թէ վասն զի զօրաւոր էք, այլ վասն զի ժառանգեր էք ձեր նախնիներէն: Այն ժամանակէն ի վեր ամէն մարդ կը պաշտպանէ զձեզ և կը հաւնի ձեր բրածին, ու աշխարհիս մեծամեծներու աչքին նուիրական էք դուք. այն ժամանակէն ի վեր, հրով և սրով առաջ կ'երթաք միշտ, կը գողնաք, կը սպաննէք, անպատուհաս կը հայհոյէք Աստուծոյ և

մարդկանց օրէնքները, և կը պարծենաք թէ այդ իրաւունքը ստացեր էք ժառանգութեամբ: Արդ ես ձեզի կ'ըսեմ, պիտի գայ ժամանակ մը, — և հետու չէ այն, — որ ձեր երազները փոշի պիտի դառնան. տկարները պիտի ճանչնան իրենց ուժը, և դուք պիտի ճանչնաք ձեր ոչընչութիւնը: Երբէք մտածեցիք այս վրէժ-խընդիր ժամուն վրայ: Երբէք սոսկացիք ձեզի և ձեր զաւակաց սպառնացող այս սպազային հանդէպ»:

Մեղաւորները պատասխան չէին տար. աչքերնին վար առած կը սպասէին աւելի դառն յանդիմանութիւններու: Տէրն շարունակեց.

— «Յանուն իմ յարութեան ձեր դիմաց կը բանամ փրկութեան ճամբան: Այդ ճամբան պիտի գտնէք ձեր խղճին դատաստանին մէջ որ պիտի պարզէ ձեր դիմացը ձեր անցեալը իր մերկութեամբը և գարշառնօքն. պիտի կանչէ ձեր սպաննածներուն ուրուականները և պիտի շարէ զանոնք ձեր անկողնոյն շուրջը՝ պահակ զինուորներու նման: Ձեր տուները պիտի թնդան ակոռներու կրճատներէն, ձեր կիները պիտի չճանչնան իրենց էրիկը, և ձեր զաւակները՝ իրենց հայրը: Սակայն երբ ձեր սիրտը դառնութեամբ և տրտմութեամբ չորնայ, երբ ձեր խիղճը զեղանի, դուրս թափի՝ նման բաժակի մը որ չի կրնար տանիլ այդչափ դառնութիւն, այն ստեն ձեր սպաննածներուն ուրուականները պիտի հաշտուին ձեզի հետ և պիտի բանան ձեզի փրկութեան ճամբան. այն ստեն այլ ևս պիտի չզսնտին գողեր, մարդասպաններ, վրէժիպիտներ, սուտ բարեւ պաշտներ, անգութ իշխաններ. ամէնքն ալ հաւասարապէս պիտի վայելին իմ երկնաւոր բնակարանիս մէջ տիեզերական խնջոյքը: Գնացէք ուրեմն, և գիտցէք որ իմ խօսքս ճշմարտութիւն է»:

Նոյն պահուն Արեւիք կարմրեցաւ, ու անտառին արշալուսային թերաստուերին մէջ տեսնուեցաւ մարդկային այլանդակ մարմին մը՝ որ կը շարժէր բարտիի մը ճիւղերուն վրայ. կախուածին գլուխը՝

մարմնէն գրեթէ բաժնուած, դէպ ի երկիր կը խոնարհէր. ազոանները արդէն փոքր էին անոր աչքերը և կերեր էին այտերը. զգեստներուն պատուածքներէն կը տեսնուէին որդնոտած լայն վերքերը. կախուածը՝ հովէն մղուած, անհեթեթ կերպով շարժեց թևերը, զիշակեր թռչուններու բազմութիւն մը կը թռչաւէին վերևը, և անոնցմէ յանդգնագոյնները չէին դադար կոցելէ: Մատնիչն էր՝ որ ինքզինքը պատժեր էր: Ամէնքը սարսափով և զզուանօք աչքերնին դարձուցին այն տեսարանէն. Տիրոջ աչքերն զայրոյթով վառուեցան:

— «Այ մատնիչ, ըսաւ, դուն կը կարծէիր թէ մատնութեանդ ոճիրէն պիտի ազատու կամաւոր մահով մը. շուտով ճանչցար ամօթդ, և փութացիր վերջ տալ ամօթալի կեանքիդ: Ոճիրդ այնչափ այլանդակ թուեցաւ քեզի որ սարսափով փախար ընդհանուր արհամարհանքէն և լաւագոյն համարեցար հոգեոյդ կորուստը: Ըսիր ինքրինդ. «Վայրկեան մը միայն, և հողիս պիտի ընկղմի աղջամղջին խաւարին մէջ, և սիրտս պիտի դադրի բաբախելէն խղճիս խայթերէն»: Սակայն այնպէս պիտի չըլլայ: Վար իջիր ծառէն, մատնիչ, պարապ աչքերդ թո՛ղ լեցուին լուսով, խղիւսայթեալ վէրքերդ թո՛ղ գոցուին, զգուելի դէմքդ թո՛ղ առնու երեմնի կերպարանքը՝ երբ համբուրեցիր զայն՝ զոր կը մատնէիր: Կորի՛ր»:

Այս խօսքերուն Մատնիչը իշաւ ծառէն ամէնուն աչքին դիման, և Տիրոջ առջև գետին ինկաւ, ու կ'ազաչէր որ շնորհէ իրեն դարձեալ մահը:

— «Ամէնուն ցուցուցի փրկութեան ճամբան, շարունակեց Յարուցեալը, իսկ ըսու դիմացդ, մատնիչ, գոց պիտի մնայ այն ցմբշտ: Դուն անիծուած ես Աստուծմէ և մարդիկներէն, անիծուած յաւիտեանակա՛նապէս: Դուն ոչ միայն քեզի վստահացող բարեկամդ մեռուցիր, այլ յանկարծակի հասար վրան և զինքը տանջանքներու և նախատինքներու մատնեցիր: Անոր համար կը պատժեմ զքեզ յաւիտեանականապէս.

Հ Ա Ի Ա Տ Ք

բաղրէ բաղաք, երկրէ երկիր պիտի քալես, և պիտի չգտնես ապաստանելու ծածք մը. դոները պիտի զարնես և քեզի բացող պիտի չըլլայ. հաց պետի խնդրես, և քեզի բար պիտի տան. Չուր պիտի ուզես և քեզի պիտի տան աման մը լեցուն անոր արխնով՝ զոր ծախեցիր. պիտի լաս, և արցունքներդ պիտի ըլլան կրակէ հեղեղներ, պիտի այրեն երեսներդ և վէրքերով պիտի ծածկեն: Փարերն՝ որոնց վրայ պիտի կոխես, պիտի պոռան. « Մատնի՛չ, անիծեալ ըլլաս»: Մարդիկ զքեզ տեսնելուն մէկդի պիտի քաշուին, և ամէնուն ղէմքին վրայ պիտի կարգաս. « Մատնի՛չ, անիծեալ ըլլաս»: Յամաքի վրայ և Չուրերու մէջ մահը պիտի փնտես, բայց մահը քեզմէ պիտի հեռանայ շչելով աւանջէդ. « Մատնի՛չ, անիծեալ ըլլաս »: Չարագոյնն. ժամանակ մը հակասագիրդ պիտի գլխայ վրադ. պիտի գտնես բարեկամ մը և պիտի մատնես զանի, ու այդ բարեկամդ իր քանտին խորէն պիտի պոռայ երեսիդ. « Մատնի՛չ, անիծեալ ըլլաս»: Իարիք ընկելու կարելիութիւնը պիտի գտնես, բայց այդ բարիքդ պիտի թունաւորէ ընդունողներուն սիրտը. « Անիծեալ ըլլաս, մատնի՛չ, պիտի պոռան անոնք, դուն ալ՝ քու բոլոր գործերդ ալ »:

« Ու այդպէս պիտի թափառիս դարերով՝ տանելով հետդ տանջանքդ և կորսուած հոգիդ: Կորի՛ք անիծեալ, և ապաւանջ ազգերու պատմէ՛ յաւիտենական տանջանքը որ կը սպասէ մատնիչներուն: Ոտք ելլի՛ր, իրր գաւազան առ ձեռքդ այն հիւղն որով կը յուսայիր մահը գտնել, ու քալէ՛ »:

Հագիւ լճացոյց Տէրն իր խօսքերը, ոտք ելաւ մատնիչը և ձեռքն առաւ գաւազանը: Շուտով անսահման և խորհրդաւոր հեռաւորութեան մէջ՝ ուր կը սպասէ իրեն դարաւոր կեանքը, մարեցաւ անոր քայլերուն ձայնը:

Ու կը քալէ դեռ մինչև այսօր ամէն կողմ ցանկելով անհամաձայնութիւն, ստեղծութիւն և մատնութիւն...:

ԱԶԷՏՐԻՆ

Թարգմ. Յ. Ա. Վ. Գոմտագեան

Յիշատակ արդարոց օրհնութեամբ կոչելի:

Մերթ առաջնորդ ցուպ բանաւոր կ'ըլլայ իրեն Մէկն անոնցմէ որ անկեղծիկ զինք կը սիրեն, Յաճախ մըտքովն օղասըլաց կը շըրջի Ուր հրաւիրէ ձայնն հոգեւէր իւր իւրզնի: Հասակն հրոկայ՝ ղէմքն ալեծուփ՝ Երկայն միւրուք վայելուչ, Լուսաւորչայ պատկերի մ' հուպ՝ Առաքինի այր մը լուրջ:

Հանձնյական, որչափ պատկառ երեսյթ. Իմ մըտքիս մէջ նա կը գրծէ Անանիա Շիրակացի մը անըրյթ, Միւտոն մը իսկ՝ որ մըտածէ. « Ով երկընքի սիրուն զաւակն անբարսիկ, Սըրտիս խորէն կու տամ բարև, Լոյս սուրբ, փոխէ՛ բիրս ալ արև՝ Այլոց նըման ես ալ ըլլամ երջանիկ... »:



Այն որ նոր դարն համաշխարհի ըսկըսաւ՝ Մեծվարդապետն՝ հոգեբարի խօսք մ'ըսաւ. « Պէտք է գիտնալ, ո՞վ մարդիկ, Եթէ հաւատք ունենաք՝ Լոկ բառով մ'իսկ էք ճարպիկ Ուրբոր զըլել ծովուն տակ... »:

Դուն՝ ով Աղա Յովհաննէս՝ * Գու հաւատքովըդ հրգօր Սարին կատար կը հանես Ծովերու Չուրն ալ այսօր:

Քու գործերուդ մէջ վըսեմ Չայնն հաւատքիդ կը լըսեմ... Ափսո՛ս քեզի որ չունիս ԅնքերուդ տակ ճառագայթ

* Յովհաննէս Սահպանեան Զուրիթեանց, Թէոդոսիա (Խորիմ):